ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Պրեմիում Ինվեսթ ՍՊԸ
Մասնակիցների ընդհանուր ժողովի

«01» ապրիլի 2025թ.

թիվ 1 որոշմամբ

Մասնակիցների ընդհանուր ժողովի նախագահ՝

Դավիթ Հարությունյան _____

ԿԱՐԳ

ԱՐԺԵԹՂԹԵՐՈՎ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

Ուժի մեջ է՝ 2025թ-ի ապրիլի «01»-ից

ԲԱԺԻՆ I. ՆՊԱՏԱԿԸ, ԿԻՐԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ, ԱՌՆՉՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 1. ՆՊԱՏԱԿԸ

1. Արժեթղթերով գործառնությունների իրականացման կարգը սահմանում է Պրեմիում Ինվեսթ ՍՊԸ-ի կողմից ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ կենտրոնական բանկի կողմից թողարկված պարտատոմսերով, ինչպես նաև այլ թողարկողների կողմից թողարկված պարտատոմսերով գործառնությունների իրականացման կարգը՝ համաձայն ՀՀ օրենսդրության:

ԳԼՈՒԽ 2. ԿԻՐԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

2. Արժեթղթերով գործառնությունների իրականացման կարգի պահանջները տարածվում են նկարագրվող գործառույթներում ներգրավված Պրեմիում Ինվեսթ ՍՊԸ-ի աշխատողների վրա:

ԳԼՈՒԽ 3. ԱՌՆՉՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

3. Արժեթղթերով գործառնությունների իրականացման կարգը մշակված է ՀՀ Օրենսդրության և ՀՀ Կենտրոնական բանկի իրավական ակտերի պահանջներին համապատասխան:
4. Արժեթղթերով գործառնությունների իրականացման կարգն առնչվում է հետևյալ հիմնական փաստաթղթերի հետ.
   1) «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության Օրենք (փոփոխություններով):
   2) Պրեմիում Ինվեսթ ՍՊԸ Մասնակիցների ընդհանուր ժողովի 2025 թվականի փետրվարի-ի թիվ/որոշմամբ հաստատված «Ներդրումային քաղաքականություն»:

ԳԼՈՒԽ 4. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

5. Արժեթղթերով գործառնությունների իրականացման կարգում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝
   1) Ընկերություն՝ Պրեմիում Ինվեսթ ՍՊԸ:
   2) Արժեթուղթ՝ պետական և կորպորատիվ պարտատոմս:
   3) Օրենք՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք:
   4) Կարգ՝ Ընկերության «Արժեթղթերով գործառնությունների իրականացման կարգ»:
   5) Աճուրդ՝ պարտատոմսերի թողարկումների առաջնային տեղաբաշխման նպատակով կազմակերպվող մրցութային գործընթաց, որի ժամանակ պարտատոմս ձեռք բերելու նպատակով գնորդները ներկայացնում են հայտեր:
   6) Երկրորդային շուկա՝ շուկա, որտեղ շրջանառվում են նախկինում տեղաբաշխված պարտատոմսերը:
   7) Հակադարձ ռեպո գործարք՝ պարտատոմսերի առուվաճառքի գործարք, երբ Ընկերությունը հանդես է գալիս որպես պարտատոմսեր վաճառող՝ դրանք հակադարձ ռեպո համաձայնագրում նշված ժամկետում վաճառքի գնով հետ գնելու և սահմանված տոկոսագումար վճարելու պարտավորությամբ, իսկ հակառակ կողմը հանդես է գալիս որպես գնորդ՝ համաձայնագրում նշված ժամկետում պարտավորվելով դրանք վերավաճառել Ընկերությանը:
   8) Ռեպո գործարք – պարտատոմսերի առուվաճառքի գործարք, երբ Ընկերությունը հանդես է գալիս որպես պարտատոմսեր գնող՝ դրանք ռեպո համաձայնագրում նշված ժամկետում առքի գնով հետ վաճառելու պարտավորությամբ, իսկ հակառակ կողմը հանդես է գալիս որպես վաճառող՝ համաձայնագրում նշված ժամկետում պարտավորվելով դրանք Ընկերությունից հետ գնել և համաձայնագրով սահմանված տոկոսագումար վճարել:
   9) Գործառնական օր՝ արժեթղթերով գործառնությունների հաշվառման ծրագրային ապահովում:
   10) Բաժին՝ Արժեթղթերով գործառնությունների բաժին:
   11) ՀՖԲ՝ Հայաստանի ֆոնդային բորսա ԲԲԸ:

ԲԱԺԻՆ II. ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6. Կարգը սահմանում է Ընկերությունում՝
   1) Առաջնային շուկայից Արժեթղթերի ձեռքբերման գործընթացը,
   2) Երկրորդային շուկայում Ընկերության անունից և հաշվին Արժեթղթերի առքուվաճառքի գործընթացը,
   3) Ռեպո, հակադարձ ռեպո գործառնությունների իրականացման գործընթացը,

4) Կարգի պահանջների կատարման նկատմամբ հսկողությունը և ներքին աուդիտի իրականացումը:

ԳԼՈՒԽ 2. ԱՌԱՋՆԱՅԻՆ ՇՈՒԿԱՅԻՑ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ

7. Աճուրդին նախորդող աշխատանքային օրվա վերջում Բաժնի ղեկավարը գործադիր տնօրենին ներկայացնում է աճուրդի սպասվելիք եկամտաբերության վերաբերյալ կանխատեսումներ, ինչի հիման վրա որոշվում է Ընկերության աճուրդին մասնակցության ծավալը և տոկոսադրույքը:

8. Աճուրդի անցկացման օրը Բաժնի պատասխանատու աշխատողը պատրաստում է Ընկերության առաջարկվող ծավալները ներառող հայտ: Հայտում նշվում են անվանական արժեքը, գնման գինը և եկամտաբերությունը, ոչ մրցակցային առաջարկության հնարավորության դեպքում՝ միայն անվանական արժեքը:

9. Հայտը ներկայացվում է ստորագրման գործադիր տնօրենին:

10. Ստորագրված հայտը ուղարկվում է այն բանկին, որի միջոցով Ընկերությունը մասնակցելու է աճուրդին, ընդ որում հայտը ուղարկվում է աճուրդի վերջնաժամկետից առնվազն 30 րոպե առաջ: Եթե Ընկերությունը հնարավորություն ունի աճուրդին մասնակցել ուղղակի, ապա Բաժնի աշխատակիցը հայտը աճուրդի վերջնաժամկետից առնվազն 30 րոպե առաջ մուտքագրում է աճուրդի համար նախատեսված համակարգ:

11. Աճուրդի արդյունքների վերաբերյալ հաղորդագրություններ ստանալուց հետո, Բաժինը ստացված հաղորդագրությունների հիման վրա լրացնում է Արժեթղթի առք ու վաճառքի ծանուցագիր:

12. Տվյալ ծանուցագիրը ստորագրվում է աշխատողի կողմից և հաստատվում է Բաժնի ղեկավարի կողմից: Այնուհետև, Բաժնի աշխատողը ստորագրված ծանուցագիրը մուտքագրում է Գործառնական օր ծրագիր, իսկ Բաժնի ղեկավարը հաստատում է դրանք Գործառնական օր ծրագրում:

13. Ընկերության կողմից գնված Արժեթղթի ծանուցագիրը հայտի պատճեի հետ տրվում է Հետգործառնական սպասարկման խմբին՝ Գործառնական օր ծրագրում համապատասխան հաշվապահական ձևակերպումներ կատարելու համար:

ԳԼՈՒԽ 3. ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԲԱՆԿԵՐԻ և ԱՅԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔ

14. Ընկերության անունից Արժեթղթերի առք ու վաճառքի գործարքները կարող են իրականացնել Ընկերության կողմից համապատասխան լիազորություններ ունեցող Բաժնի աշխատողները:

15. Գործարքները կնքվում են հեռախոսով կամ կապի այլ միջոցներով:

16. Գործարքը կնքելուց հետո կողմերը փոխանակվում են Արժեթղթերի առք ու վաճառքի պայմանագրով կամ տվյալ գործընկերոջ հետ կնքված գլխավոր համաձայնագրի դրույթներին համապատասխան հայտով և հաստատումով, որը Ընկերության կողմից ստորագրում է գործադիր տնօրենը (կամ համապատասխան լիազորություններ ունեցող անձը), իսկ հակառակ կողմից՝ համապատասխան լիազորված անձը: Այնուհետև Բաժնի աշխատողը լրացնում և ստորագրում է Արժեթղթի առուվաճառքի ծանուցագիրը:

17. Ծանուցագրի մեջ լրացվում են հետևյալ դաշտերը.

- Շուկայի տեսակը՝ “Աճուրդ” կամ “Երկրորդային շուկա”
- Գործարքի կնքման ամսաթիվը
- Գնորդի անվանումը
- Վաճառողի անվանումը
- Արժեթղթի նոր դասը՝ “Առևտրային նպատակով պահվող”, “Վաճառքի համար մատչելի” կամ “Մինչև մարման ժամկետը պահվող”
- Արժեթղթի թողարկման համարը
- Արժեթղթի մարման ամսաթիվը
- Արժեթղթի անվանական արժեքը
- Արժեթղթի գնման գինը
- Արժեթղթի գնման եկամտաբերությունը

- Հաշվարկների իրականացման օրերը:

18. Ծանուցագիրը հաստատում է Բաժնի ղեկավարը, այնուհետև Բաժնի աշխատողն այն մուտքագրում է Գործառնական օր ծրագիր, որը հաստատվում է Բաժնի ղեկավարի կողմից:

19. Ընկերությունը կարող է Արժեթղթով գործարքներ կնքել նաև ՀՖԲ-ում՝ համաձայն բորսայի կանոնների:

20. Ստորագրված պայմանագրի, հայտի և հաստատման պատճեն տրամադրվում է Հետգործառնական սպասարկման խմբին՝ Արժեթղթերի և դրամային փոխանցումները իրականացնելու համար: Արժեթղթերի փոխանցումներն իրականացվում են BankMail համակարգում Արժեթղթերի գնման հանձնարարական (ՀՏ 520), Արժեթղթերի վաճառքի հանձնարարական (ՀՏ 521), Արժեթղթերի ազատ առաքման հանձնարարական (ՀՏ 522) հաղորդագրությունների միջոցով:

ԳԼՈՒԽ 4. ՌԵՊՈ/ՀԱԿԱԴԱՐՁ ՌԵՊՈ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

21. Ընկերության անունից ռեպո/հակադարձ ռեպո գործարքները կարող են իրականացնել Ընկերության կողմից համապատասխան լիազորություններ ունեցող Բաժնի աշխատողները:

22. Գործարքները կնքվում են հեռախոսով կամ կապի այլ միջոցներով:

23. Գործարքը կնքելուց հետո կողմերը փոխանակվում են ռեպո/հակադարձ ռեպո պայմանագրով, որը Ընկերության կողմից ստորագրում է գործադիր տնօրենը (կամ համապատասխան լիազորություններ ունեցող անձը), իսկ հակառակ կողմից՝ համապատասխան լիազորված անձ: Այն բանկերի և ֆինանսական կազմակերպությունների հետ, որոնց հետ Ընկերությունը կնքել է «Ռեպո/հակադարձ ռեպո գործառնությունների գլխավոր համաձայնագիր», գործարքները կնքվում են համաձայնագրով նախատեսված հայտերի հիման վրա:

24. Ստորագրված պայմանագրի, հայտի և հաստատման պատճեն տրամադրվում է Հետգործառնական սպասարկման խմբին՝ արժեթղթերի և դրամային փոխանցումները իրականացնելու և Գործառնական օր ծրագրում ձևակերպելու համար: Արժեթղթերի փոխանցումներն իրականացվում են BankMail համակարգում Արժեթղթերի գնման հանձնարարական (ՀՏ 520), Արժեթղթերի վաճառքի հանձնարարական (ՀՏ 521), Արժեթղթերի ազատ առաքման հանձնարարական (ՀՏ 522) հաղորդագրությունների միջոցով:

ԲԱԺԻՆ III. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ԳԼՈՒԽ 1. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

25. Կարգով սահմանված գործառույթները/քայլերը իր ստորաբաժանումում կազմակերպելու և ապահովելու համար պատասխանատվություն է կրում Բաժնի ղեկավարը:

ԳԼՈՒԽ 2. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

11. Ընկերությունում Արժեթղթերով գործառնությունների իրականացման գործառույթների համակարգման և դրանց պատշաճ իրականացման նկատմամբ ընթացիկ հսկողության պատասխանատու է հանդիսանում գործադիր տնօրենը: Կարգով սահմանված պահանջների նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Ներքին աուդիտի ծառայությունը: